Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի նիստի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 11 դեկտեմբերի 2017թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ բանկ/ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությունը կատարվել է քվեաթերթիկներով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 79): Քվեաթերթիկները, համաձայն բանկի Խորհրդի թիվ 52/11-27.10.17թ. որոշման, տրամադրվել /առաքվել/ են բաժնետերերին մինչև ս.թ. նոյեմբերի 11-ը: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվել ժողովի անցկացման օրվա դրությամբ վերադարձված քվեաթերթիկներով տրամադրված ձայները:
Քվեաթերթիկների ամփոփման արդյունքները հետևյալն են՝

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 1,852,533 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 1,438,308 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 77.64%-ը:

Քվորումը ապահովված է:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը՝

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բանկի էմիսիոն եկամուտներից՝ 9,077,411,700 (ինը միլիարդ յոթանասունյոթ միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ կանոնադրական կապիտալի ավելացմանն ուղղելու միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման և դրա հաշվին 4,900 ՀՀ դրամի չափով մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքի մեծացման վերաբերյալ:
2. Բանկի Կանոնադրության փոփոխված տարբերակի վերաբերյալ:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի հարցի, բաշխվել են հետևյալ կերպ.

1. Առաջին հարց	կողմ	1,438,308 ձայն կամ մասնակիցների ձայների	100.0%
	դեմ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	ձեռնպահ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	անվավեր	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
2. Երկրորդ հարց	կողմ	1,438,308 ձայն կամ մասնակիցների ձայների	100.0%
	դեմ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	ձեռնպահ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	անվավեր	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Բանկի էմիսիոն եկամուտներից՝ 9,077,411,700 (ինը միլիարդ յոթանասունյոթ միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ կանոնադրական կապիտալի ավելացմանն ուղղելու միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման և դրա հաշվին 4,900 ՀՀ դրամի չափով մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքի մեծացման հարցը:

2. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության լրամշակված տարբերակը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողով.

նախագահ՝ Ա. Խաչատրյան

անդամներ՝ Ա. Աղամյան

Ե. Ալեքսանյան